«Քայլ առ քայլ բարեգործական հիմադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՄԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակ՝ Էմիլյա Գրեյան

Մանկապարտեզ՝ «Վաղաշենի մանկապարտեզ»ՀՈԱԿ

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.
Նախադպրոցական կրթությունը և հայրենաճանաչությունը

1.1 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ…….....…….5

1.2 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ …….9

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 ՑԵՐԵԿՈՒՅԹ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ.....…….....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....…….....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը վերնագրված է «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից :Թեման շատ կարևոր է բոլոր ժամանակներում: Հայրենիքը տարածք է, որտեղ որևէ ժողովուրդ կամ էթնիկ խումբ ապրում է կերտելով իր պատմությունը, կենցաղը, վարք ու բարքը, փոխելով իր սերունդը, ունենալով իր պետական կառուցվածքը՝ սերունդներին է ժառանգում իր քաղաքակրթության արժեքները: Աշխարհի յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր հայրենիքը: Դա այն տարածքն է, որտեղ նա դարեր շարունակ ապրել է՝ իր պատմությունը կերտելով: Հնում մարդիկ ապրել են բարենպաստ պայմաններ ունեցող վայրերում, տարածվել՝ զբաղեցնելով երկրագնդի գրեթե ողջ տարածքը: Բայց շատ քիչ ժողովուրդներ են ծնվել և ապրել իրենց ծննդավայրում: «Հայրենիք», «պետություն», «ծննդավայր» հասկացություններն ունեն տարբեր բովանդակություններ: Որևէ ազգի կամ էթնոսի անդամը կարող է ծնվել ու ապրել իր հայրենիքից դուրս՝ այլ տարածքում, լինել ոչ իր հայրենի պետության քաղաքացին:

Հետազոտական աշխատանքի առարկան: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների միձոցավ նպաստել թեմայի արդյունավետության բարձրացմանը և սաների կողմից բարդ թեմայի դյուրին ըմբռնմանը:

***Հետազոտության թեմայի արդիականությունը*:** Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը, այդ թվում էքսկուրսիաների, նպատակային զբոսանքների, թեմատիկ և մշակութային այցերի միջոցով:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ավագ և միջին նախադպրոցական տարիքի երեխաների

հայրենասիրական դաստիարակության եղանակները նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Հետազոտության խնդիրները. **:** Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում կարելի է հայրենիքին, նրա մնայուն արժեքներին ծանոթացնել սաներին, ինչպես նաև նրանց մեջ սերմանել հայրենասիրական զգացումներ:

Հետազոտության մեթոդները. Գրական աղբյուրների հետազոտություն, թեմայի վերաբերյալ նյութերի մշակում և համակարգում, փորձի նկարագրում, իրականացում, դիտարկում, ներկայացում, եզրահանգում:

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Հայրենասիրական դաստիարակությունը

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Այն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում երեխայի բնականոն զարգացման համար, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դեպի դպրոց երեխայի անցումը լինի սահուն և հեշտ: Շատ կարևոր է, որ ուսումնադաստիարակչական գործընթացը պլանավորելիս մանկավարժական աշխատողները հաշվի առնեն նախադպրոցական կրթական ծրագրերի պահանջները: Դրանք են՝ համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին, կրթության աշխարհիկ բնույթը, երեխաների և մեծահասակների փոխգործունեության անհատակողմնորոշված (երեխայակենտրոն) մոտեցման ապահովումը, ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը, նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը:

Բնականաբար, այս ամենը մեծապես կախված է բոլոր այն մասնագետների նվիրումից ու արհեստավարժությունից, ովքեր անմիջականորեն աշխատում են երեխայի հետ: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, նախադպրոցական կրթական չափորոշչային պահանջների բավարարման, պարապմունքների մեթոդական համար պատասխանատու են բոլոր նախադպրոցական մանկավարժական աշխատողները: Այս գործընթացի կարևոր մաս է նաև նախադպրոցականներին հայրենիքին ու նրա մնայուն արժեքներին ծանոթացումը: Դաստիարակը պետք է փորձի ուսումնական պարապմունքը, հանդեսը այնպես կազմակերպի ու պլանավորի, որպեսզի կարողանա հետաքրքրել ու մոտիվացնել

սովորողին, սիրել տալ հայրենիքը, ազգային արժեքներն ու ավանդույթները: Մանկապարտեզում ստացած հայրենիքի ու հայրենագիտության մասին գիտելիքները ամբողջանում, ավելի ակնառու են դառնում էքսկուրսիաների ժամանակ: Նախադպրոցականն իր աչքով է տեսնում հետաքրքիր թանգարանային նմուշներ, պատմական հուշարձաններ, մոտենում հայրենի բնությանն ու մշակույթին: Հայրենագիտական նախագիտելիքները հաղորդվում են միջին խմբում, ավելի համակարգվում, աբողջանում արդեն ավագ խմբում: Ուսումնական պարապմունքների ժամանակ հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու: Հայրենաճանաչողական ուսումնական պարապմունքներ կարելի է անցկացնել նկարչության, երաժշտության շրջանակներում, կարելի է երեխաների համար կազմակերպել կինոդիտում, ծանոթացնել հայ անվանի մարդկանց, հերոսներին, գիտնականներին, արվեստագետներին: Սա նախադպրոցականի առաջին քայլերն են հայրենաճանաչության ճանապարհին, ուստի պետք է ամեն կերպ փորձել հետաքրքրնել նրանց: Հայրենասիրությունը դրսևորվում է տվյալ երկրում ապրող ժողովրդի նկատմամբ սիրով: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրի համար հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց և մայրենի լեզվից: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը,

Այսպիսով, նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը: Իսկ այդ համատեքստում առանցքային կարևորության հիմնահարց է հայրենասիրական դաստիարակությունը: Մեր հայրենիքն ունի դարավոր պատմություն, նրա անունը հիշատակվում է այնպիսի հինավուրց քաղաքակրթությունների կողքին, որոնցից շատերը հիմա գոյություն չունեն, իսկ Հայաստանը մինչև հիմա կանգուն է, կանգուն է չնայած այն ամենին, ինչն նրա հետ կատարվել է այդ դարավոր պատմության ամենատարբեր դրվագներում: Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ, որը հոգևոր խորը արժեքներ է փոխանցում: Սկիզբ առնելով մ.թ.ա. մոտ 4000-ական թվականներից՝ այն քաղաքակրթության ամենահին կենտրոններից մեկն է: Հայաստանն ու հայ ժողովուրդը շատ կորուստներ է ունեցել, նրա պատմությունը մի մեծ մատյան է ողբերգության, որի էջերին հայ ժողովրդի ցավն ու տառապանքն է: Բայց անկախ ամեն

ինչից, մենք կանք, հայն շարունակել է գոյություն ունենալ այդ հինավուրց ժամանակներից մինչև այսօր: Այս փոքրիկ և արևոտ երկրում շատ տեսարժան վայրեր կան՝ Գառնու տաճարը, Գեղարդը, Էջմիածինը, Խոր Վիրապը, Ամբերդը, Տաթևի վանքը, Սևանա լիճը: Այն հինավուրց մշակութային ժառանգություն ունի, հարուստ է պատմական եկեղեցիներով, վանքերով, հուշարձաններով, սարերով ու ձորերով, որոնք մեր հայրենիքի պատմության լուռ վկաներն են:

Հայաստանի պատմության մեծ գիրքը տառապանքի բազմաթիվ էջեր ունի: Եվ այնուամենայնիվ, չնայած այս բոլոր փորձություններին, որոնք կարող էին լրջորեն սպառնալ հայ ժողովրդի գոյատևմանը, հայերը ոչ միայն գոյատևեցին իրենց պատմության բոլոր փորձություններից, այլև ստեղծեցին ամենայուրահատուկ և հետաքրքիր քաղաքակրթություններից մեկը: Հային տված է ապրել զրկանքներով: Նա դարերի խորքով է անցել ու եկել, հասել է մինչև այսօր: Հասել է, բայց այն ամենը, ինչ ինքն է տեսել, միայն ինքը՝ Հայը գիտի: Մենք կորցրել ենք այն ամենը, ինչն սիրել ենք, ինչն մեզ համար թանկ է եղել: ՈՒ այդ թանկերի մեջ է նաև Արարատը՝ բիբլիական լեռը, հայի խորհրդանիշն ու սրբությունը, որն այնքան մոտիկ է, որ կարծես, եթե երկարացնես ձեռքդ, կդիպչես նրան, ու միևնույն ժամանակ այնքան հեռու է, որ ինչքան էլ գնաս՝ չես հասնի, իսկ եթե հասնես էլ, միևնույնն է, քոնը չի: Այն այնքան օտար է, բայց այնքան հարազատ: Դարեր շարունակ այն հայի խոհրդանիշն է եղել, նրա սպիտակ, ձյունածածկ գագաթները՝ Սիսն ու Մասիսը լուսավորել է հայի հոգին, այն մի լուսավոր կանթեղ է, ճրագ, որ ջերմացրել է հայի հոգին: Բայց այսօր արդեն մեկ դար է ու ավելի, ինչ գերության մեջ է, մեկ դար է, ինչ հայն կարոտով է նայում Արարատին ու ամեն անգամ հոգվոց հանում, քանզի այդքան հարազատ լինելով՝ իրենը չէ, այն թշնամունն: Ամեն անգամ նայելուց այն հիշեցնում է հայերի կյանքում մեծ տեղ գրաված ողբերգության մասին:

Հայ ազգն ևս մեկ անգամ ապացուցեց, որ միավորվելով կարող է պայքարել ու հաղթել, ու նրա միասնության դեմ անզոր են բոլորը: Հայ երիտասարդությունն ապացուցեց, որ իր քաջ ու անպարտելի նախնիների արժանի հետևորդն ու ժառանգն է: Նոր սերունդն ցույց տվեց, որ կարող է հաղթել միասնությունով, միմյանց հանդեպ սիրով ու հարգանքով, միևնույն գաղափարի շուրջ միանալով, երգելով, ուս ուսի տված պարելով ու ժպտալով:

1.2 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենաճանաչողության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կեցվածքը: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ նախադպրոցական կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա սաների հայրենաճանաչողության ձևավորումն կարևորությունը: Հայրենաճանաչողության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սաների գիտելիքների, պատմական ուղու,նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ դասընթացի բարդացում և ծանրաբեռնում արտածրագրային նյութերով: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, երեխաների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները: Երեխաների տարիքը, նրանց գիտական մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաբումը, ինչպես նաև դասապրոցեսի ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները: Նույն խմբի սանն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է երեխայի

ինտելեկտուալ պատրաստակամությունը, դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես նախադպրոցական տարիքում առանձնահատուկ

զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց

ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է

անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք փոքրիկի նկատմամբ: Ելնելով

վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ երեխայի արժեքայի համակարգի ձևավորումը ժամանակակից կրթության գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հայրենաճանաչողության ուսուցման գործընթացում, պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի մեթոդների,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սաների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության - հանրագումարային դասերը:

ԳԼՈՒԽ II

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1. ՑԵՐԵԿՈՒՅԹ ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

Թեմա- «Անկախությունը 32 տարեկան է»

Տեսակը- Ցերեկույթ

Նպատակները - Հստակեցնել և ամրապնդել երեխաների գիտելիքները՝ ՀՀ-ի վերաբերյալ:Ծանոթացնել ՀՀ դրոշին, զինանշանին, օրհներգին, տեսարժան վայրերին, հուշարձաններին(նկարների միջոցով):

Խնդիրները - Արթնացնել հայրենասիրական զգացմունքներ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով: Երեխայի գիտակցությանը հասցնել, որ հայրենիքը մեկն է, ուստի չի կարելի լքել: Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը: Զարգացնել խոսքային և ճանաճողական կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ - ՀՀ զինանշան, դրոշ, Հայաստանի Հանրապետության տեսարժան վայրերի նկարներ պարունակող պաստառ:

Խթանում -Սաները դաստիարակի հետ միասին երգեցին ՀՀ օրհներգը, իսկ սաներից մեկը հանդիսավոր կերպով դահլիճ բերեց ՀՀ դրոշը:

Դաստիարակ-Ով կարող է հայրենիքի վերաբերյալ քառաող արտասանել:

Երեխաներ-**Խաղաղություն ենք ուզում,**

որ մենք անհոգ մեծանանք,

Հայրենիքիս հովանու տակ

Թող միշտ ուրախ մենք ժպտանք:

Իմաստի ընկալում - Հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը: Դատիարակը ցուցադրում է զինանշանը, պատմում որ արծիվը իմաստուն ժողովրդի խորհուրդն է, առյուծը՝ ժողովրդի ուժը: Եվ պատմում է 4 թագավորությունների մասին, Արարատ լեռան և Նոյյան տապանի մասին:

Դաստիարակ-Ի՞նչ բանաստեղծություն գիտեք զինանշանի մասին

Երեխաներ-**Ահա մեր զինանշանը գրավիչ ու պերճ**

Մեծ հմայք է պահում իր մեջ,

Որպես ուժի, աշխատանքի, խաղաղության խորհրդանիշ:

Ցուցադրելով դրոշը դաստիարակը խոսում է դրոշի գույների խորհուրդների մասին:

Դաստիարակը երեխաներին բաժանելով խմբերի, յուրաքանչյուր խմբում 5-ական երեխա: Այնուհետև յուրաքանչյուր խմբին տալիս է մեկական պաստառ, որի վրա պատկերված է ՀՀ պատմամշակութային երկու կոթող: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի թե որ կոթողներն են դրանք:

ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ-Հայրենաճանաչողությունը մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացում: Ցերեկույթը հնարավորություն տվեց երեխաների մեջ ձևավորել հստակ պատկերացումներ հայրենասիրության վերաբերյալ: Ցերեկույթի բովանդակությունից պարզ էր, որ դստիարակը ջանք և եռանդ չի խնայել սաների մեջ տպավորելու ՀՀ խորհրդանիշները: Ցերեկույթին ներկա սաները այս գեղեցիկ միջոցառման շնորհիվ երբեք չեն մոռանա իրեն հայրենիքի խորհրդանիշները: ԵՎ որ ամենակարևորն է դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին և ակնկալվող վերջնարդյունքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքը որը վերնագրված է «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը», մեծ նշանակություն ունի նախադպրոցական տարիքի սաների համար Նախադպրոցական տարիքում կտրուկ կերպով աճում են երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման հնարավորությունները՝ առաջացնելով նոր պահանջմունքներ, հետաքրքրությունները: Վաղ նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք էական զարգացում է ապրում մտածողությունը: Խոսքի զարգացմանը զուգընթաց՝ այլ մարդկանց հետ երկխոսության զարգացման արդյունքում մտածողությունը անցնում է դեպի կոնկրետ գործառնությունների մակարդակ: Ուստի հենց այս տարիքը բավականի նպատակահարմար է երեխային ծանոթացնել հայրենիքին, սիրել տալ իր տունը, քաղաքը, երկիրը հայրենակիցներին: Հենց այս ամենի ամբողջությունն է, որ անվանում ենք հայրենասիրություն: Հայրենաճանաչողության կարևորության մասին կարելի է խոսել երկար: Ուսումնասիրելով հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական պատմությունը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները, ստեղծած արժեքների և համամարդկային նվաճումների, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների ու կորուստների մասին երեխաների հիշողության մեջ ամրապնդվում է հայրենասիրությունը: Ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում պետք է դրվի հայրենաճանաչողության կարևորության հարցը: Պետք է սիրել հայրենիքը, հնարավոր չէ այն սիրել, հայրենիքը սիրելու եւ ճշմարիտ նկարագրով քաղաքացի լինելու միակ պայմանը հայրենիքը ճանաչելն է: Շատ կարեւոր է, որ մանկապարտեզներում ու դպրոցներում հայրենաճանաչության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենանք հայրենասերներ: Հայրենաճանաչության բացակայությունը մեզ շատ մեծ արհավիրքների կորող է հանգեցնել:

Վերջնարդյունքներ

1. ԿԿարողանան տարբերել ՀՀ դրոշն ու զինանշանը ուրիշ երկրների դրոշից ու զինանշանից:

2. կկարողանան սահուն արտասանել բանաստեղծություններ

3. Կունենան զրգացած և նոր բառերով հարստացած բառապաշար

4. Կտաբերակեն ՀՀ տեսարժան վայրերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»:
2. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:
3. Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:

ՀԱՎԵԼՎԱԾ